# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԹԵՄԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ*

ԱՆԹԻԼԻԱՍԻՑ

Վեհափառի հիվանդությունը խորապես վշտացրեց մեզ: Աղոթում ենք շուտափույթ ապաքինման համար: Բոլոր եկեղեցիներին ցուցմունք է տրված մաղթանքի համար:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ՝

**ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ**

---

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Խոր հուզում և վիշտ պատճառեց ամենքիս Վեհի անակնկալ ծանր հիվանդությունը: Սրտագին մաղթանքներ կկատարվին բոլոր եկեղեցիներուն մեջ՝ Նորին Ս. Օծության արագ և կատարյալ ապաքինման համար: Կսպասենք նոր բարի լուրերու անհամբերությամբ:

ՊԱՏՐԻԱՐՔ ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ՝

**ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

---

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Վեհափառ Տե՛ր.

Ցավում եմ խորապես Ձեր հիվանդության համար: Աստված շուտափույթ առողջություն պարգևե:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ՝

**ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ**

---

* Գերագույն Հոգևոր Խորհուրդը թեմերից ստացել է բազմաթիվ հեռագրեր՝ Վեհի ապաքինման բարեմաղթություններով, որոնցից տալիս ենք միայն արտասահմանի թեմերից ստացվածները:—ԽՄԲ.:

ԿԱՀԻՐԵԻՑ

Երեկ, կիրակի օրը, մասնավոր մաղթանքներ են կատարված Եգիպտոսի բոլոր եկեղեցիներում՝ Նորին Սրբության լրիվ ապաքինման համար: Աղոթում ենք Աստուծուն, որ Վեհափառին պարգևե առողջություն և երկար կյանք:

ԱՌԱՋՆՈՐԴ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻ՝
**ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ**

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Խորը վշտով կարդացինք Նորին Սրբության լուրջ հիվանդության վերաբերյալ հեռագիրը: Սրբոց Հակոբյանց Տաճարում ամեն օր կատարվելու է Հայրապետական մաղթանք մինչև Վեհափառի ապաքինումը: Ամբողջ միաբանությունը վշտացած է տխուր լուրից: Խնդրում ենք անընդհատ իրազեկ դարձնել մեզ Վեհափառի առողջության վիճակի մասին:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՄՀԱՃՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Խորը վշտով ստացանք ազգիս Վեհափառ սիրեցյալ Հայրապետի առողջական վիճակի վատացած լինելու տխուր լուրը: Հրահանգեցինք վիճակիս եկեղեցիներին՝ կատարել Հայրապետական մաղթանք և մասնավոր հսկում: Ջերմեռանդ աղոթող ենք Նորին Սրբության շուտափույթ առողջության և մաղթող, որ Ամենափրկիչը պահպանե նրա կյանքը:

ԱՌԱՋՆՈՐԴ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ՝
**ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ**

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Կիրակի մեր թեմի բոլոր եկեղեցիներում մեջ մասնավոր աղոթք և մաղթանք մատուցինք առ Աստված՝ Նորին Ս. Օծության արագ ապաքինման համար: Մեր սիրեցյալ ժողովուրդի ջերմեռանդ աղոթքն է՝ որ բարին Աստված փրկե Վեհափառ Հայրապետի թանկագին կյանքը և պարգևե Իրեն կատարյալ առողջություն:

Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի հայոց՝
ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍԻՑ

Կիրակի մեր եկեղեցիներում մեծ աղոթեցինք և միշտ կաղոթենք մեր Վեհափառ Կաթողիկոսի առողջության համար:

ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

---

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ռումինահայ ժողովուրդն ու մենք ջերմեռանդ աղոթում ենք առ Աստված մեր սիրեցյալ մեծ Հայրապետի շուտափույթ և կատարյալ առողջության համար՝ հուրախություն բոլորիս և ի պայծառություն մեր միասնական Եկեղեցու:

**Առաջնորդ Ռումինահայ թեմի՝**
ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ,
ԴՈԿՏՈՐ ԲԱՄԲՈՒԿՋՅԱՆ

---

ԱԹԵՆՔԻՑ

Շանթահարիչ հեռագրեն խորապես զգացված, այս առավոտ, ի ժամ պատարագի, հյուրաբար քաղաքս գտնվող Գրիգոր եպիսկոպոս Կարապետյանի նախագահությամբ կատարվեցավ մաղթանք և աղոթք՝ Վեհափառ Հայրապետի բժշկության և կատարյալ ապաքինման համար: Կսպասենք նոր լուրի:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՅԱՆ

---

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Վեհափառի առողջության վատանալը մեծ վիշտ պատճառեց: Հրահանգեցինք մեր բոլոր եկեղեցիներում կատարել մաղթանք Վեհի առողջության համար: Կմիացնենք ժողովուրդի մաղթանքին մեր անձնական աղոթքները: Տերը շուտափույթ առողջություն պարգևե մեր սիրելի Հայրապետին:

**Առաջնորդ կալիֆորնիո թեմի՝**
ՇՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ

---

ԹԱՎՐԻԶԻՑ

Մայիսի 9-ին, Թավրիզի մայր եկեղեցում, հոծ բազմության ներկայությամբ, կատարեցինք գոհաբանական աղոթք՝ վասն արևշատության Վեհի: Խնդրում ենք հայտնել Վեհի առողջության վիճակը:

**Առաջնորդական տեղապահ՝**
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

---

ԹԵՀՐԱՆԻՑ

Վեհափառ Հայրապետի առողջության համար Թեհրանի մայր եկեղեցում, բազմահազար աղոթողների մասնակցությամբ կատարվեց մաղթանք: Ժողովուրդը և հոգևորականությունը Ամենակալից սիրով հայցեցին Վեհափառ Կաթողիկոսի կատարյալ ապաքինումը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱՋՅԱՆ

ԲՈՄԲԵՅԻՑ

Սրտանց միանում եմ Ձեզ հետ Նորին Սրբության շուտափույթ ապաքինման աղոթքներին: Ցանկանում ենք Նրան երկար կյանք:

ԺՈԶԵՖ ՂԱՐԻԲՅԱՆ